Հաստատում եմ՝
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ
Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի
տնօրեն՝ ______ Տ. Հովսեփյան
«16» 10 2023թ.

Դասղեկի պլանը բխում է դասղեկի՝ դպրոցի կանոնադրությամբ ու պաշտոնային նկարագրով սահմանված գործառույթներից և դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանից:
ՄՄ-ների՝ ՄԿՈՒ գ-ծով ղեկավար՝ Գ. Հակոբյան

# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի — Վանաձոր
մարզ — համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց
ուսումնական հաստատության անվանումը

IIա
դասարանը

Սուսան Օնիկի Գրիգորյան
դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

**Դաստիարակի աշխատանքի փուլային նկարագրություն**

**Ուսումնական տարվա սկիզբ**

1.Կազմել աշակերտների անվանացանկը

2.Կազմել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

**Ամենօրյա աշխատանքներ**

1.Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դաստիարակական ժամեր

2.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

**Ամենամսյա աշխատանքներ**

1.Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Դուրս բերել սովորողների բացակայությունները

3.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից , հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից , դրանք նրբանկատորեն կրևառել դաստիարակական աշխատանքում

4. Իրականացնել դիտարկումներ ուղված սովորողների մեջ ԿԱՊԿ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՌԻՊ –ների մշակմանը

5. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում,համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի

Միջոցով:

**Դասարանի ղեկավարը (այսուհետ ՝ դասղեկ) , իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝**

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին ՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կյանքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում է սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային, էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

# ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (*դասարանի ընդհանուր բնութագիրը)* Դասարանում սովորում է 24 աշակերտ՝ 7տղա,14 աղջիկ: Երեխաները համերաշխ են, ընկերասեր, կարգապահ: Աշակերտներն աչքի են ընկնում աշխույժ, ակտիվ բնավորությամբ: Դասարանում տիրում է առողջ , ընկերական, փոխօգնության մթնոլորտ: Աշխատանք է տարվում հիգիենայի պահպանման, լսելու, խոսելու կուլտուրան բարձրացնելու ուղղությամբ:

2. Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն – Ծանոթացնել պետական տոներին, պետության խորհրդանիշերին՝ դրոշին, զինանշանին, օրհներգին, ազգային հերոսներին: Արժևորել խաղաղության գինը: Ձևավորել հայրենասիրություն, համարձակություն, ազգային արժանապատվություն: Գաղափար տալ Հայաստանի սահմանների, աշխարհագրական դիրքի դպրոցում:

3. Ֆիզիկական դաստիարակություն – Ուսումնասիրել սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետևել նրանց հիգիենայի պահպանմանը, կազմակերպել նրանց ազատ ժամանակը՝ կազմակերպելով տարբեր սպորտային խաղեր, հաճախ լինել բնության գրկում: Հոգ տանել առողջության պահպանմանը:

4. Աշխատանքային դաստիարակություն – Կազմել օրվա ռեժիմ, մասնակցել դասարանի մաքրության պահմանմանը: Աշխատանքի ընթացքին ծանոթանալու համար կազմակերպել էքսկուրսիաներ համապատասխան վայրեր և ձևավորել աշխատասիրություն:Աշակերտը պետք է հասկանա, որ ՝«Չկա վատ աշխատանք, կա վատ կատարող»:

5. Հոգևոր դաստիարակություն – Սովորողներին ծանոթացնել ՀՀ Սահմանադրության օրենքներին, որոնք նշում են մայրենի լեզվի դերը, ազգապահպանության գործում: Նրանց մոտ ձևավորել ազատությունը կարևորելու և ուրիշների իրավունքները հարգելու հմտություն:

Գեղեցիկը ներազդում է մտքի, հոգու, կամքի վրա, հարստացնում է հոգևոր աշխարհը Սովորեցնել սիրել, ներել, օգնել միմյանց, հանդուրժել:
Կազմակերպել մանկական ներկայացումների դիտումներ, բնութագրել հերոսներին, օրինակ վերցնել դրական հերոսներից: Հարգալից վերաբերմունք, սեր ձևավորել եկեղեցու նկատմամբ: Սովորեցնել ոսկե կանոնը և փորձել կիրառել:

6. Գեղագիտական դաստիարակություն – Սովորողներին ծանոթացնել ազգային արժեքներին՝

նկարչություն, պարարվեստ, գրականություն և այլն: Գեղագիտական դաստիրակության շրջանակներում օգտագործել ԿԳՄՍ նախարարության կողմից սովորողներին տրվող աբոնեմենտալ տոմսերը՝ այց կազմակերպել թատրոն, թանգարան , պատկերասրահ: Հետևել, որ դրանք նպաստեն գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Գեղեցիկը ներազդում է մտքի, հոգու, կամքի վրա, հարստացնում է հոգևոր աշխարհը:

7. Բնապահպանական դաստիարակություն – Ծանոթացնել ՀՀ և ընդհանրապես երկիր մոլորակի բնապահմանական վիճակին և խնդիրներին: Այնպես անել, որ յուաքանչյուր սովորող իրեն համարի այդ բնության նկատմամբ պարտականություններ ունեցող մեկը, ով պետք է պահպանի բնաշխարհը: Աշակերտների մեջ սեր արթնացնել բնության՝ ծաղկի, ծառերի, բույսերի և կենդանիների նկատմամբ: Կազմակերպել զբոսանքներ բնության գրկում: Զրույց անցկացնել շրջապատի բուսական աշխարհի մասին: Երեխաները պետք է հասկանան բնության նշանակությունը և նրա խնամքի անհրաժեշտությունը:

8. Դպրոց - ընտանիք կապը – Համագործակցել սովորողների ծնողների հետ, ծանոթացնել ծնողի իրավունքներին և պարտականություններին, նրանց ներգրավել համադպրոցական միջացառումներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ:

| | Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | սեպտեմբեր | Ծնողական ժողովի հրավիրում:Ծանոթացնել նոր դասագրքերի, գնահատման հետ կապված փոփոխություններին: | դասվար | |
| 2 | սեպտեմբեր | Զրույց «Ինչպես անցնել փողոցը» | դասվար | |
| 3 | սեպտեմբեր | Օրվա ռեժիմը | դասվար | |
| 4 | սեպտեմբեր | ՀՀ խորհրդանիշները, զրույց Հայաստանի անկախության մասին | դասվար | |
| 5 | հոկտեմբեր | Զրույց ‘Իմ քաղաքը’:Փողոցում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները | դասվար | |
| 6 | հոկտեմբեր | Զրույց «Ուսուցիչ ի՛մ թանկագին» | դասվար | |
| 7 | հոկտեմբեր | Զրույց «Ինչու՞ է կարևոր սննդի բազմազանությունը» | դասվար | |
| 8 | հոկտեմբեր | Զրույց «Ի՞նչ ենք ուտում, ինչպիսի՞ն պետք է լինի ուտելիքը» | դասվար | |
| 9 | նոյեմբեր | Սովորեցնել ճանապարհային երթևեկության կանոնները:Հետիոտների տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով | դասվար | |
| 10 | նոյեմբեր | Զրույց «Ում անունն է կրում իմ դպրոցը» թեմայով: Ճանապարհային գծանշումը: | դասվար | |
| 11 | նոյեմբեր | Զրույց «Ուտելու կուլտուրա» | դասվար | |
| 12 | նոյեմբեր | Զրոիյց «Վարքի կանոնները»: Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները | դասվար | |
| 13 | դեկտեմբեր | Զրույց «Առողջ ապրելակերպի կանոնները» | դասվար | |
| 14 | դեկտեմբեր | Աշակերտների մոտ ձևավորել տնային աշխատանքը ինքնուրույն կատարելու ունակություն: Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները: | դասվար | |
| 15 | դեկտեմբեր | Զրույց «Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից» | դասվար | |
| 16 | դեկտեմբեր | Ամանորյա հանդեսի կազմակերպում | դասվար | |
| 17 | հունվար | Հայոց բանակի տոն | դասվար | |
| 18 | փետրվար | Զրույց «Մենք ուղևորներ ենք»: Խաչմերուկն ու դրանց տեսակները | դասվար | |
| 19 | փետրվար | Նշել գիրք նվիրելու օրը: Զրույց «Իմ կարդացած գրքերը» թեմայով: Ուղևորների պարտականությունները: | դասվար | |
| 20 | փետրվար | Նշել Մայրենիի տոնը: Հեքիաթի օր | դասվար | |
| 21 | փետրվար | Զրույց «Ի՞նչն է լավ, ի՞նչն է վատ» | դասվար | |
| 22 | մարտ | Մայրության և գեղեցկության տոն:Զրույց ‘Գարուն’ | դասվար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | թեմայով | | |
| 23 | մարտ | Երեխայի իրավունքներն ու պարտականությունները | դասվար | |
| 24 | մարտ | Բջջային հեռախոսից օգտվելու կանոնները | դասվար | |
| 25 | ապրիլ | Սովորում ենք պահպանել երևեկության կանոնները:Տրանսպորտային միջոցներից իջնելու , փողոցն անցնելու  կանոնները | դասվար | |
| 26 | ապրիլ | Ինչու՞ է անհրաժեշտ օդափոխել սենյակը | դասվար | |
| 27 | ապրիլ | Զրույց «Իմ հերոսը» | դասվար | |
| 28 | ապրիլ | Զբոսանք մոտակա այգի: Ճանապարհային նշաններ; Խաղեր  հատուկ գծանշվածհրապարակում կամ փողոցում | դասվար | |
| 29 | մայիս | Զրույց մայիսի 1-ի, աշխատանքի օրվա շուրջ | դասվար | |
| 30 | մայիս | Այցելել «Հեքիաթի տուն» | դասվար | |
| 31 | մայիս | Ստեղծել դասարանական թանգարան, ցուցադրել լավագույն աշխատանքներ կերպարվեստից և տեխնոլոգիայից | դասվար | |
| 32 | մայիս | Տարեվերջյան էքսկուրսիա | դասվար | |

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման օրը,ամիսը, տարեթիվը | Անցկացվող (դասախոսություն, զրույցներ, քննարկումներ և այլն) | Անցկացման վայրը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 09 | Զրույց «Ինչպե՞ս անցնել փողոցը» | դասարան | դասվար |
| 09 | Զրույց''Օրվա ռեժիմը'' թեմայով | դասարան | դասվար |
| 09 | Զրույց «Մեր  անկախ հայրենիքը  32 տարեկան է» թեմայով: | դասարան | դասվար |
| 09 | Խոսել եռագույն դրոշի, զինանշանի մասին Իմանալ ՀՀ խորհրդանիշները:Սովորել օրհներգը | դասարան | դասվար |
| 10 | Զրույց''Ինչպես պաշտպանվել բնական աղետներից'' | դասարան | դասվար |
| 10 | Մասնակցել տարհանմանը:Ինչ անել տագնապի ազդանշանի դեպքում | դպրոց | դասվար |
| 10 | Զրույց «Ուսուցիչ ի՛մ թանկագին»: | դասարան | դասվար |
| 10 | Զրույց  «Ի՞նչ ենք ուտում, ինչպիսի՞ն պետք է լինի ուտելիքը»:Քննարկել | դասարան | |
| 11 | «Աշնանային պարահանդես» զրույցն անցկացնել մոտակա այգում, տեսնել բնության մեջ կատարվող փոփոխությունները: | այգի | դասվար |
| 11 | Կոնֆլիկտների հաղթահարում՝ «Արի հաշտվենք» պատմության:Քննարկել | դասարան | դասվար |
| 11 | Զրույց «Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները»: | դասարան | դասվար |
| 11 | Երեխայի իրավունքներ՝ «Երեխայի իրավունքների պաշտպանը» պատմության ընթերցում և քննարկում: | դասարան | դասվար |
| 12 | Զրույց''Ինչ է պատասխանատվության զգացումը'':Քննարկել | դասարան | դասվար |
| 12 | Փողոցում և ճանապարհներին սովորողների վարքի  հիմնական կանոնները:Քննարկել | դասարան | դասվար |
| 12 | Նոր տարվան նվիրված ներկայացման դիտում և քննարկում: | դասարան | դասվար |
| 12 | Ամանորյա հանդեսի կազմակերպում դասղեկի ժամին | դասարան | դասվար |
| 01 | Զրույց «Հայկական բանակ» թեմայով: Կարևորել գիտելիքը, գիտությունը, բացատրել, որ նոր տեխնիկա և զենքեր ստեղծելու համար պետք է լավ սովորել: | դասարան | դասվար |
| 02 | Զրույց «Ի՞նչն է լավ, ի՞նչն է վատ»:Քննարկել | դասարան | դասվար |
| 02 | Նշել գիրք նվիրելու օրը: Զրույց «Իմ կարդացած գրքերը» թեմայով: | դասարան | դասվար |
| 02 | Կարևորել մայրենի լեզվի դերը:Հեքիաթի ձնավորում | դասարան | դասվար |
| 02 | Զրույց «Մենք ուղևորներ ենք»: Խաչմերուկն ու դրանց տեսակները: | դասարան | դասվար |
| 03 | Զրույց՝  նվիրված մայրիկների տոնին: Բացիկների պատրաստում մայրիկների համար: | դասարան | դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 03 | Երեխայի իրավունքներն ու պարտականությունները:Քննարկել | դասարան | դասվար |
| 03 | Զրույց «Անձնական հիգիենա» թեմայով՝ ինչպե՞ս խնամել մազերը, մաշկը, ատամները, հագուստը, կոշիկները: | դասարան | դասվար |
| 04 | Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ՝ գարնան զարթոնքը դիտելու: | այգի | դասվար |
| 04 | Սովորում ենք պահպանել երևեկության կանոնները:Տրանսպորտային միջոցներից իջնելու , փողոցն անցնելու կանոնները: | դասարան | դասվար |
| 04 | Ինչու՞ է անհրաժեշտ օդափոխել սենյակը:Քննարկել | դասարան | դասվար |
| 04 | Զրույց «Բարեկիրթ վարվեցողություն տանը, դպրոցում, հասարակական վայրերում» թեմայով: | դասարան | դասվար |
| 05 | Զրույց մայիսի 1-ի, աշխատանքի օրվա շուրջ | դասարան | դասվար |
| 05 | Զրույց «Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի» թեմայով:Բանավեճ | դասարան | դասվար |
| 05 | Անցկացնել զրույց « Ինչպե՞ս ճիշտ կազմակերպել երեխաների ամառային հանգիստը» թեմայով :Տալ ծրագրային գրականության ցանկը, հանձնարարել կատարել ամառային առաջադրանքները: | դասարան | դասվար |
| 05 | Էքսկուրսիա Օշական, Զվարթնոց | Օշական | դասվար |

**Ծնողական ժողովների թեմատիկան**

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | 1. Կազմակերպչական հարցեր:<br>2. Ժամանակավորապես դասագրքերի բացակայության հարցի քննարկում :<br>3. Ծնողխորհրդի կազմի ընտրությունը: | Դասվար | |
| Դեկտեմբեր<br>Հունվար | 1. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում: 2. Հոգեբանական,կարգապահական խնդիրների քննարկում և լուծման տարբերակների քննարկում:<br>3. I կիսամյակի Բնութագրող գնահատման ամփոփում , առաջադիմության հարցերի քննարկում ,բացակայությունների ամփոփում:<br>4.արձակուրդային աշխատանքների քննարկում | Դասվար | |
| Մարտ-Ապրիլ | 1. կազմակերպչական հարցերի քննարկում:<br>2. առաջադիմության հարցերի քննարկում ,բացակայությունների ամփոփում: | Դասվար | |
| Մայիս | 1. II կիսամյակի բացակայությունների ամփոփում:<br>2. Բնութագրող գնահատման տարեկան ամփոփում: Առաջադիմության հարցերի քննարկում<br>3. Ընթացիկ հարցեր | Դասվար | |